

Կ Ա Ր Գ

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի կողմից

ՀՀ տարածքում գործող ԲՈւՀ-երի ուսանողական խորհուրդներին և ուսանողական խորհրդարաններին դրամական միջոցների հատկացման

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից ՀՀ տարածքում գործող ԲՈւՀ-երի ուսանողական խորհուրդներին և ուսանողական խորհրդարաններին (այսուհետ՝ ուսխորհուրդներ) դրամական միջոցների հատկացման գործընթացի հետ կապված հիմնական հարաբերությունները:

1.2 Հիմնադրամը, ղեկավարվելով իր կանոնդրության 2-րդ գլխով, կարող է ֆինանսական օժանդակություն ցուցաբերել ուսխորհուրդներին՝ իրենց ծրագրերի իրականացման համար: Հաշվի առնելով վերջիններիս կազմակերպչաիրավական ձևը՝ դրամական միջոցները փոխանցվում են ԲՈւՀ-երին՝ ուսխորհուրդների կողմից համապատասխան ծրագրերն իրականացնելու նպատակով:

1.3 Յուրաքանչյուր տարում վերոնշյալ ֆինանսական օժանդակությունը կատարվում է Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից հաստատված նախահաշվին համապատասխան՝ ԲՈւՀ-երի կողմից Հիմնադրամին արված հատկացումների մի մասի հաշվին:

2. Ուսխորհուրդների ծրագրերի իրականացման համար դրամական միջոցների հատկացման և հաշվետվության ընդունման ընթացակարգ

2.1 Հիմնադրամից ֆինանսական աջակցություն ստանալու համար Հիմնադրամի գործադիր տնօրենին է ներկայացվում փաստաթղթերի փաթեթ, որում ներառված են՝

2.1.1 ԲՈւՀ-ի ղեկավարից Հիմնադրամի գործադիր տնօրենին ուղղված նամակ,

2.1.2 ուսխորհրդի ծրագիր (տես սույն կարգի Հավելված 1),

2.1.3 ծրագրի նախահաշիվ (տես սույն կարգի Հավելված 2):

2.2 Ներկայացված փաթեթը քննարկվում է Հիմնադրամի՝ *Ուսանողական կազմակերպություններին նյութական օժանդակության ցուցաբերման հանձնաժողովի*

նիստում, որից հետո ծրագիրը համակարգողը տեղեկացվում է հանձնաժողովի որոշման մասին:

2.3 Դրական պատասխանի դեպքում պայմանագիր է կնքվում Հիմնադրամի և ԲՈւՀ-ի միջև (տես սույն կարգի Հավելված 3):

2.4 Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, Հիմնադրամի գործադիր տնօրենի անունով ներկայացվում է հաշվետվություն՝ ԲՈւՀ-ի ռեկտորի և ուսխորհրդի նախագահի ստորագրությամբ (տես սույն կարգի Հավելված 4):

2.5 Այն դեպքում, եթե Հիմնադրամի կողմից հատկացված դրամական միջոցները ծախսվում են ոչ նպատակային, առկա է լինում անհամապատասխանություն ծրագրի նախահաշվի և փաստացի ծախսերի միջև կամ բացակայում են ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճենները, Հիմնադրամն իրավունք ունի.

2.5.1 դադարեցնել տվյալ ծրագրի ֆինանսավորումը, և/կամ

2.5.2 ԲՈւՀ-ից հետ պահանջել հատկացված դրամական միջոցները, և/կամ

2.5.3 հրաժարվել ֆինանսավորել տվյալ ԲՈւՀ-ի ուսխորհրդի հաջորդ ծրագրերը:

2.6 Այն դեպքում, եթե հատկացված դրամական միջոցների մի մասը խնայվում է, ԲՈւՀ-ը պարտավորվում է 3 բանկային օրվա ընթացքում վերադարձնել խնայված դրամական միջոցները Հիմնադրամին:

3. Փոփոխություններ ծրագրում կամ նախահաշվում

3.1 Ծրագրի իրականացման ընթացքում փոփոխությունների անհրաժեշտության դեպքում ծրագիրը համակարգողը գրավոր դիմում է Հիմնադրամի գործադիր տնօրենին՝ ներկայացնելով փոփոխված ծրագիրը և/կամ նախահաշիվը, ինչպես նաև փոփոխությունների պատճառները:

3.2 Եթե փոփոխությունը կատարվում է ծրագրում կամ նախահաշվում նշված գումարի մինչև 10%-ի չափով, ապա փոփոխության ընդունման կամ մերժման որոշումը կայացնում է գործադիր տնօրենը:

3.3 Եթե փոփոխությունը կատարվում է նախահաշվում նշված գումարի 10%-ից ավել չափով, ապա փոփոխությունները քննարկվում են Հիմնադրամի՝ *Ուսանողական կազմակերպություններին նյութական օժանդակության ցուցաբերման հանձնաժողովի* նիստում:

3.4 Սույն գլխի 3.2-րդ և 3.3-րդ կետերում նշված դեպքերում ծրագիրը համակարգողը գրավոր տեղեկացվում է որոշումների մասին:

3.5 Փոփոխություններն ընդունելու դեպքում Հիմնադրամի և ԲՈւՀ-ի միջև կնքվում է լրացուցիչ համաձայնագիր:

3.6 Փոփոխությունները մերժելու դեպքում Հիմնադրամի և ԲՈւՀ-ի միջև կնքված պայմանագիրը վաղաժամ լուծվում է:

3.7 Սույն գլխի 3.6-րդ կետում նշված դեպքում պայմանագիրը լուծելիս ԲՈւՀ-ը պարտավորվում է 3 բանկային օրվա ընթացքում հետ վերադարձնել Հիմնադրամին դրամական միջոցների չօգտագործված մասը:

4. Ուսանողական կազմակերպություններին նյութական աջակցության հատկացման Հանձնաժողովի կազմավորում և պարտականություններ, նիստերի անցկացման և որոշումների ընդունման ընթացակարգ

4.1 Ուսանողական կազմակերպություններին նյութական աջակցության հատկացման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծվում է Հիմնադրամի գործադիր տնօրենի հրամանով:

4.2 Հանձնաժողովը բաղկացած է 3 անդամից.

- Հոգաբաժուների խորհրդի համակարգող,
- Հիմնադրամի գործադիր տնօրեն,
- Հիմնադրամի ծրագրերի ղեկավար:

4.3 Հանձնաժողովի կազմը կարող է փոխվել միայն գործադիր տնօրենի հրամանով:

4.4 Հանձնաժողովի կազմավորման մասին հրամանով անդամներից նշանակվում են հանձնաժողովի նախագահ (այսուհետ՝ նախագահ) և հանձնաժողովի քարտուղար (այսուհետ՝ քարտուղար):

4.5 Նախագահը.

4.5.1 ըստ պահանջի և ոչ ուշ, քան ուսխորհրդի ծրագիրը ստանալուց հետո 10 աշխատանքային օրում, հրավիրում է հանձնաժողովի նիստ,

4.5.2 սահմանում է նիստի անցկացման ժամկետները և հետևում է դրանց կատարմանը,

4.5.3 քվեարկության է դնում ուսխորհուրդների ծրագրերը,

4.5.4 քննարկման է դնում ծրագրում կամ նախահաշվում կատարվող փոփոխությունները:

4.6 Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները:

4.7 Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը կարող է նիստերին հրավիրել համապատասխան ոլորտների ներկայացուցիչների՝ մասնագիտական կարծիք ստանալու նպատակով:

4.8 Նիստի ընթացքում քարտուղարը ներկայացնում է Հանձնաժողովին նոր ծրագրերը, դրանց նախահաշիվները, ընթացիկ ծրագրերի վերաբերյալ փոփոխությունները և այլն:

4.9 Հանձնաժողովը յուրաքանչյուր ներկայացված նոր ծրագրի կամ ընթացիկ ծրագրի փոփոխությունների վերաբերյալ պետք է կայացնի որոշում ոչ ավել, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4.10 Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

4.11 Ներկայացված ծրագրերի վերաբերյալ Հանձնաժողովը կարող է կայացնել հետևյալ որոշումները.

4.11.1 ֆինանսավորել ծրագիրը,

4.11.2 մերժել ծրագրի ֆինանսավորումը,

4.11.3 առաջարկել ծրագրի վերամշակում:

4.12 Ծրագիրը ֆինանսավորելու որոշման դեպքում հարաբերությունները կարգավորվում են սույն կարգի 2-րդ գլխի համաձայն:

4.13 Ծրագրի ֆինանսավորումը կարող է մերժվել, եթե.

4.13.1 տվյալ ԲՈւՀ-ը դեռևս չի ներկայացրել նախորդ ծրագրի հաշվետվությունը կամ այն դեռ չի ընդունվել,

4.13.2 տվյալ ուսխորհուրդն արդեն իրականացնում է ծրագրի Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ (բացառությամբ այն դեպքերի, երբ ուսխորհուրդը ներկայացնում է գրավոր հիմնավորում նոր ծրագրի անհետաձգելիության վերաբերյալ),

4.13.3 ծրագրի նախահաշվում նշված գումարը չի համապատասխանում իրականացվող ծրագրին,

4.13.4 այլ դեպքերում:

4.14 Ներկայացված ծրագրի վերամշակում առաջարկելու դեպքում Հանձնաժողովը գրավոր առաջարկ է ներկայացնում՝ նշելով այն անհրաժեշտ փոփոխությունները և դրանց

իրականացման ժամկետները, որոնց կատարման դեպքում ծրագիրը կֆինանսավորվի Հիմնադրամի կողմից:

4.15 Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում հանձնաժողովը հաստատում է այդ նիստի արձանագրությունը:

4.16 Արձանագրությունը կարող է պարունակել նաև տեղեկություններ հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին: Նիստին ներկա անդամները պարտադիր կարգով ստորագրում են հանձնաժողովի որոշումները:

5. Կարգի հավելվածներ

5.1 Սույն կարգի անբաժանելի մասն են կազմում.

5.1.1 Հավելված 1-ը՝ Ուսխորհրդի ծրագիր,

5.1.2 Հավելված 2-ը՝ Ծրագրի նախահաշիվ,

5.1.3 Հավելված 3-ը՝ Պայմանագիր,

5.1.4 Հավելված 4-ը՝ Հաշվետվություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի կողմից
ՀՀ տարածքում գործող ԲՈւՀ-երի ուսանողական խորհուրդներին
և ուսանողական խորհրդարաններին դրամական միջոցների հատկացման կարգի

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի
գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամին ներկայացվող ծրագիր

- ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

- ԾՐԱԳՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

- ԾՐԱԳՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ, ԿՈՆՏԱԿՏՍՅՔԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

- ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

- ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

- ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի կողմից
ՀՀ տարածքում գործող ԲՈւՀ-երի ուսանողական խորհուրդներին
և ուսանողական խորհրդարաններին դրամական միջոցների հատկացման կարգի

- ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽ ԽՈՒՄԲԸ

- ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՑՑԸ

- ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Ռեկտոր

<ստորագրություն>

Ուսխորհրդի նախագահ

<ստորագրություն>

ամսաթիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի կողմից
ՀՀ տարածքում գործող ԲՈւՀ-երի ուսանողական խորհուրդներին
և ուսանողական խորհրդարաններին դրամական միջոցների հատկացման կարգի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ N ___

h/h	անվանում	չափման միավոր	քանակ	միավորի արժեք (ՀՀ դրամով)	գումար
	ԸՆԴԱՄԵՆԸ՝				

Ռեկտոր

Պայմանագիր N ____

ք. Երևան

----/-----/20---թ

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամը, այսուհետ՝ «Շահատու», ի դեմս գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «-----», այսուհետ՝ «Շահառու», ի դեմս -----, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Շահատուն, իրագործելով իր կանոնադրության 2-րդ գլխով նախատեսված նպատակները, պարտավորվում է Շահառուին «-----» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար տրամադրել ----- (-----) ՀՀ դրամ գումար:

1.2 Պայմանագրով նախատեսված գումարը տրամադրվում է պայմանագիրը ստորագրելու պահից 10 բանկային օրվա ընթացքում՝ բանկային փոխանցումով:

1.3 Ծրագրի նպատակը և ֆինանսավորման չափը հիմնավորվում են Շահառուի կողմից Շահատուին նախքան սույն Պայմանագրի կնքումը ներկայացված ծրագրով և ծրագրի նախահաշվով (տես սույն Պայմանագրի Հավելված 1 և 2):

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Շահատուն իրավունք ունի՝

2.1.1 Շահառուից պահանջել սույն պայմանագրի համաձայն հատկացվող դրամական միջոցներն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին, ծրագրի նպատակներին և նախահաշվին համապատասխան:

2.1.2 Առանց միջամտելու Շահառուի աշխատանքի բնականոն ընթացքին՝ իր ներկայացուցչի միջոցով հետևել Ծրագրի իրականացման աշխատանքներին:

2.1.3 Ծրագրի իրականացումից հետո 10 աշխատանքային օրում, Շահառուից պահանջել ու ստանալ ծրագրային ու ֆինանսական հաշվետվություն (այսուհետ՝

հաշվետվություն) սույն պայմանագրի համաձայն հատկացվող դրամական միջոցների ծախսման վերաբերյալ (տես սույն Պայմանագրի Հավելված 3):

2.1.4 Շահատուի կողմից ներկայացրած հաշվետվությունը չընդունելու կամ վերջինիս կողմից Շահատուի ներկայացուցչի աշխատանքներին պարբերաբար խոչընդոտելու դեպքում պահանջել լուծել պայմանագիրը և Շահատուից հետ պահանջել փոխանցված դրամական միջոցները:

2.1.5 Շահատուի կողմից սույն պայմանագրի 2.1.3 կետում նշված ժամկետում հաշվետվություն չներկայացնելու դեպքում պահանջել վերադարձնել փոխանցված դրամական միջոցները և մերժել հաջորդ ծրագրի ֆինանսավորումը:

2.2 Շահատուն պարտավոր է՝

2.2.1 Դրամական միջոցները Շահատուին տրամադրել սույն պայմանագրի 1.2 կետում նշված կարգով:

2.3 Շահատուն իրավունք ունի՝

2.3.1 Պահանջել Շահատուից սույն պայմանագրով սահմանված 1.1 կետում նշված դրամական միջոցները:

2.4 Շահատուն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի համաձայն հատկացվող դրամական միջոցները օգտագործել ծրագրով նախատեսված ժամկետներում, այդ միջոցների հատկացման նպատակներին համապատասխան և համաձայն նախահաշվի:

2.4.2 Ծրագիրն իրականացնել սույն թվականի -----ից -----ը՝ -----
-----ում:

2.4.3 Շահատուի կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված դրամական միջոցները վերադարձնել Շահատուին 3 բանկային օրվա ընթացքում:

2.4.4 Ծրագրի իրականացման ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Շահատուին ներկայացնել ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ

սույն պայմանագրի համաձայն հատկացվող դրամական միջոցների ծախսման վերաբերյալ:

2.4.5 Ծրագրի ընթացքում նշել Շահատուի անվանումը՝ որպես դրամական միջոցներ տրամադրողի:

2.4.6 Ծրագրի ընթացքում տեղադրել Շահատուի ցուցապաստառը:

2.4.7 Բոլոր տպագիր նյութերում տեղադրել Շահատուի լոգոտիպը և անվանումը, որոնք պետք է համապատասխանեն վերջինիս կողմից նախապես ներկայացված ստանդարտներին:

2.4.8 Շահատուին ներկայացնել բոլոր այն պայմանագրերի կրկնօրինակները, որոնք ծրագրի իրականացման նպատակներից ելնելով և Շահատուի կողմից փոխանցված դրամական միջոցների հաշվին կնքվել են Շահատուի և երրորդ անձանց միջև:

2.4.9 Շահատուին տրամադրել ծրագրի իրականացման ընթացքում տպագրված նյութերի, թերթերի, ամսագրերի, շապիկների նմուշներ, միջոցառման լուսանկարներ, տեսանյութեր և այլն:

2.4.10 Ներկայացված ծրագրում նշել ծրագիրը համակարգողի տվյալները (տես սույն Պայմանագրի Հավելված 1), իսկ վերջինիս փոփոխման դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում Շահատուին գրավոր ձևով հայտնել նոր համակարգողի տվյալները:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագրի իրականացման ընթացքում կողմերը ղեկավարվում են ՀՀ օրենսդրությամբ և Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի կողմից ՀՀ տարածքում գործող ԲՈւՀ-երի ուսանողական խորհուրդներին և ուսանողական խորհրդարաններին դրամական միջոցների հատկացման կարգով:

3.2 Սույն պայմանագրով Շահատուի կողմից ստացված դրամական միջոցների նպատակային ծախսման պարտավորությունները համարվում են կատարված Շահատուի կողմից հաշվետվություններն ընդունելուց հետո:

3.3 Սույն պայմանագրին համապատասխան Շահատուի կողմից ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկությունների արժանահավատության համար պատասխանատվությունը կրում է Շահատուն:

4. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

4.1 Շահատուի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել (այդ թվում նաև դատական կարգով)։

4.1.1 եթե Շահատուն սույն պայմանագրին համապատասխան հատկացվող միջոցներն օգտագործել է պայմանագրի պայմանների խախտումներով, խախտել է հաշվետվությունների ներկայացման պահանջը կամ ժամկետները, կամ

4.1.2 Շահատուն չի ընդունել Շահատուի կողմից ծրագրում կամ նախահաշվում կատարվող փոփոխությունները:

4.2 Սույն պայմանագրի 4.1.1 կետում նշված դեպքում պայմանագիրը վաղաժամ լուծելիս Շահատուն պարտավորվում է 3 բանկային օրվա ընթացքում Շահատուին վերադարձնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամական միջոցներն ամբողջությամբ:

4.3 Սույն պայմանագրի 4.1.2 կետում նշված դեպքում պայմանագիրը վաղաժամ լուծելիս Շահատուն պարտավորվում է 3 բանկային օրվա ընթացքում Շահատուին վերադարձնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամական միջոցների չօգտագործված մասը:

4.4 Շահատուի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Շահատուն Շահատուին չի տրամադրել սույն պայմանագրով սահմանված դրամական միջոցները կամ խոչընդոտել է դրանք պայմանագրի պայմաններին համապատասխան օգտագործելու համար:

5. Վեճերի լուծման կարգը

5.1 Սույն պայմանագրից ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՒՄ- ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունները, եթե դրանք անմիջականորեն անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Շահատուի կողմից հաշվետվություններն ընդունելու պահը:

7.2 Սույն պայմանագրի անբաժանելի մաս են հանդիսանում պայմանագրի հավելվածները:

7.3 Սույն պայմանագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել առանձին համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.4 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի կողմից
ՀՀ տարածքում գործող ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդներին
և ուսանողական խորհրդարաններին դրամական միջոցների հատկացման կարգի

8. Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային վավերապայմանները.

Շահատու	Շահառու
Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամ	-----
ք. Երևան, Տեղյան 74	-----
ՀՎՀՀ 02559042	-----
Ինեկոբանկ	-----
h/h 205004201922	
Գործադիր տնօրեն՝	-----
Ա. Տեր-Հովակիմյան	-----

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի կողմից
ՀՀ տարածքում գործող ԲՈւՀ-երի ուսանողական խորհուրդներին
և ուսանողական խորհրդարաններին դրամական միջոցների հատկացման կարգի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

1. Ծրագրի անվանում -----
2. Ծրագիրն իրականացնող կազմակերպության անվանումը -----

3. Իրավաբանական հասցեն -----
4. Գործունեության հասցեն -----
5. Ծրագրի աշխատանքները համակարգող անձի տվյալները (անուն-ազգանուն, պաշտոն).

6. Պայմանագրի համարը, կնքման ամիս-ամսաթիվ -----
7. Ծրագրի իրականացման վայր -----
8. Ծրագրի սկիզբ -----
9. Ծրագրի ավարտ -----
10. Ծրագրի մասնակիցների թիվը -----
11. Ծրագրին մասնակցող կանանց թիվը -----
12. Ծրագրին մասնակցող տղամարդկանց թիվը -----
13. Ծրագրին մասնակցող երեխաների թիվը -----
15. Ծրագրի իրականացման շրջանակներում դրված խնդիրները (նկարագրել, թե ինչ ծավալով են իրականացվել պայմանագրով նախատեսված նպատակները) (առավելագույնը՝ 3 էջ):
16. Չնախատեսված դժվարություններ, որոնք առաջացել են ծրագրի իրականացման ընթացքում. (Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել վերոնշյալ դժվարությունները լուծելու համար) (առավելագույնը՝ 3 էջ):
17. Ծրագրի մանրամասն նկարագիր (ծրագրի ժամանակացույցով քայլ առ քայլ իրականացրած գործողությունների նկարագրություն, որը կներառի ծրագրային առաջարկության մեջ զետեղված ցուցանիշները, ինչպես նաև իրականացրած գործողությունների ընթացքում կատարած ծախսերը՝ ըստ նախահաշվի) (առավելագույնը՝ 3 էջ):

Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի կողմից
ՀՀ տարածքում գործող ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդներին
և ուսանողական խորհրդարաններին դրամական միջոցների հատկացման կարգի

18. Ֆինանսավորում

Փաստացի կատարած ծախսեր (ներկայացնել ծախսերը հիմնավորող փաստաթղթերի և երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի պատճենները):

Փ Ա Ս Տ Ա Ց Ի Ծ Ա Խ Ս Ե Ր

h/h	անվանում	չափման միավոր	քանակ	միավորի արժեք (ՀՀ դրամով)	գումար
	ԸՆԴԱՄԵՆԸ՝				

Ռեկտոր

<ստորագրություն>

Ուսխորհրդի նախագահ

<ստորագրություն>

ամսաթիվ